

Բանալի բառեր. Օրենք, Ազատություն, պատահականություն, ճգնաժամ, «կառավարելի քառոս», գիտություն, փիլիսոփայություն, հոգևոր գիտելիք, համաշափության և փիլիսոփայության, հիմքերը, անցում, Կյանք:

ON THE ISSUE OF LAW AND FREEDOM IN COGNITION

Ida Hakobyan

*Doctor of Philosophical Sciences,
Leading Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA*

SUMMARY

Law and Freedom are addressed as interconnected cognitive categories from the perspectives of science, philosophy and spiritual knowledge at the level of their foundations. That allows us to outline the ways out of the global planetary crisis or the so-called “controlled chaos” and to see a possibility of a transition to the shores of Life by connecting the past, present and future.

Key words: Law, Freedom, fortuity, crisis, controlled chaos, science, philosophy, symmetry, foundations of science, transition, Life.

DAS MAN-Ի ԵՎ ՄԱՆԿԱՆ ՀԱՅԴԵԳԵՐՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Մանուկ Հարությունյան

*Փիլիսոփայական գիտությունների դրկուոր,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, տողոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող*

Մարդկային պատմության մեջ Հայդեգերն առանձնացնում է բարօրության և անապաստանության, տնանկության դարաշրջաններ. կամ մարդը զգում է, որ ապրում է աշխարհում, ինչպես իր օջախում /տանը/՝ բարեկեցիկ, անվտանգ և արժանապատիկ կյանքով, կամ իրեն զգում է լրված և միայնակ՝ տիեզերքի անսահմանության դեմ հանդիման, կույր ճակատազրի իշխանության ներքո: Իր ապրած ժամանակները նա բնութագրել է որպես «կեցության մոռացության դարաշրջան», կամ, որ նույնն է՝ տնանկության դարաշրջան¹:

¹ Хайдеггер М., Бытие и время, М., 1993, с.43.

Այդ կապակցությամբ Հայդեգերը նշում է, որ «Այն, ինչը Հեգելից հետո Մարքսը ... ճանաչեց որպես մարդու օտարում, իր արմատներով գալիս է նորաելլուսական մարդու տնանկությունի»²: Տնանկության, անապաստանության վիճակը, նախևառաջ, մարդու առօրյա գոյությունն է, առօրեականությունը, որը Հայդեգերն անվանում է «դիմագրկված մարդուկի» օտարված կեցության եղանակ: Սորեականությունը մարդուն հանզստացնում-թմրեցնում է, ենթարկում սոցիալական շափանիշների և արժեքների նուրբ, հաճախ աննկատ ներգործության: Այսպես մարդկային անհատը կարծես թե ազատվում է սեփական կեցության անհրաժեշտությունից ու իր անհատական գոյության համար պատասխանատվությունից: Նա ամբողջովին հարմարվում է հասարակությանը, որն, իհարկե, փոխհատույց է լինում դրա դիմաց³: Այսպիսին է մարդու անիսկական, օտարված կեցությունը, կամ, որ նույնն է, տնանկության վիճակը:

Զանգվածային հասարակության մեջ դիմագրկված մարդը կարծես թե դառնում է փոխարինելի ցանկացած մեկ ուրիշ մարդով⁴: Մարդիկ դառնում են փոխադարձաբար փոխարինելի, ընդ որում «մեկ ուրիշը» միանգամայն որոշակի մեկը չէ, այլ, ընդհակառակը, «ցանկացած մեկ ուրիշը», «մեկ ուրիշ է», առհասարակ:

Մարդկանց փոխադարձ փոխարինելիությունը, մտովի իր տեղադրումն ուրիշի փոխարեն, առաջ է բերում այն, ինչ Հայդեգերն անվանել է մարդու նկատմամբ օբյեկտիվ հայացքի, կամ, որ նույնն է՝ «միջնացման» հիմնախնդիր: Խոսքը միջին, դիմագրկված մարդու այն պատկերացման մասին է, երբ, այսպես կոչված, միջին մարդու մասին պատրանքային պատկերացումը նույնացվում է իրական մարդու հետ: Սուբյեկտն արդեն ոչ թե այն մեկն է, ոչ թե ես եմ և ոչ թե՝ ոմանք, և ոչ ել բոլորը միասին, այլ սուբյեկտը Միջինն է: Հայդեգերի արտահայտությամբ՝ das Man-ը:

Հայդեգերն առաջին ամգամ das Man բան օգտագործել է իր «Կեցությունը և ժամանակը» աշխատության մեջ⁵: Գերմաներենում das Man-ը անորոշ անձնական դերանուն է, որով մեծանուն փիլիսոփան բնութագրել է ինքնօտարված մարդուն, ով բաղկել է անդեմ, անանուն

² Хайдеггер М., Письмо о гуманизме. – Проблема человека в западной философии (сб.ст.). М., 1988, с. 336.

³ Хайдеггер М., Бытие и время, М., 1993, с.127.

⁴ Նոյն տեղում:

⁵ Хайдеггер М., Бытие и время, М., 1993, с.126.

Երևոյթների աշխարհում, որտեղ մարդու համար ամեն ինչ խորք և օտար է, բոլոր մյուս մարդիկ՝ պարզապես «ուրիշները», ինըն էլ իր հանդեպ և իր համար ևս՝ «ուրիշ» և «օտար»: Das Man-ի անդիմությունը մարդուն թելադրում է հրաժարվել իր ինքնությունից և ազատությունից (ամբոխն՝ իբրև das Man-ի արտահայտիչ՝ ոչ մի իմաստավորված որոշում չի ընդունում և չի կրում ոչ մի քաղաքական պատասխանատվություն), նա այն է՝ «ինչպես բոլորը»: «Մենք, - դիմուկ նկատում է Հայդեգերը, - վայելում ու զվարձանում ենք, ինչպես զվարձանում են մյուս բոլոր մարդիկ, ընթերցում, դիտում ու դասում ենք գրականության և արվեստի մասին, սակայն մենք նաև երես ենք թերում «ամբոխից», ինչպես բոլոր մարդիկ են թերում, մենք «զայրացուցիչ» ենք համարում այն, ինչ մարդիկ գտնում են զայրացուցիչ: Մարդիկ, որոնք չունեն որևէ որոշակիություն... թելադրում են առօրեականությանը գոյության եղանակ»:⁶

Անխորհուրդ, չմտածված և կահապարփած առօրեական կյանքը՝ ինչպես բոլորը սկզբունքով, տիպիկ հոտային, կենդանական գոյության մի ձև է, եթե ոչ մեկը չի ցանկանում ապրել իր իսկական կյանքով: Ճետևաբար, եթե ինքը՝ մարդը, չի ընտրում իր կյանքն ու նրա ուղին, նշանակում է, որ նա ապրում է ուրիշի կյանքով, նա անընդհատ կրկնում է այն, ինչ որ իրենից առաջ ասել կամ արել են միշտնափոր մարդիկ, և նրա ազատ և ինքնավար, սեփական գոյության համար անհրաժեշտություն չկա: Առօրեական գոյությունը՝ անանձնական գոյություն է, որը մարդուց քարցնում է նրա «դատապարտված» լինելը: Man-ը կամ հայերեն Ումս-ը, անտեղյակ է, որովհետև նրա աշխարհը դիմազրկված է, ուստի և զգիտ մահ, որը միանգամայն անձնական երևոյթ է: Այսպիսին է առօրեական գոյության՝ այդ պատրանքային աշխարհի «քարցնող ուժը»: Առօրեականության օտարացնող աշխարհը՝ «մարդկային կեցության փախուստն է ինքն իրենից»:⁷

Ֆրանսիական հանրահոչակ քատերազգիր Էժեն Շննեսկոն պատկերել է այդ վիճակն իր «Շնգեղջուր» պիեսում, որտեղ նկարազրկում է, թե ինչպես մի փոքրիկ քաղաքում ինչոր մեկն անակնկալ կերպով կերպարանափոխվում և դառնում է կենդանի՝ ոնցեղջուր: Քաղաքի մյուս ընակիշներին այնքան գրավիչ է թվում այդ կերպարանափոխությունը, որ իրենք ևս սկսում են աստիճանաբար վերածվել ոնցեղջուրների: Չի

⁶ Խայդեգեր Մ., Бытие и время, М., 1993, с.126-127.

⁷ Նոյն տեղում, էջ 128:

գունվում մեկը, որ ասեք, որ ես չեմ ցանկանում լինել ոնզեղյուր, որ ես չեմ ցանկանում լինել այսպես, ինչպես բոլորը: Իննեւսկոն այդպես ցուց է տալիս, որ զանգվածային հասարակության մեջ շատ-շատերն այլև չունեն արտաքին անդեմ ուժերին դիմադրելու ուժ, որովհետև զրկվել են իրենց ներքին հոգևոր առանցքից: Իսկ այդ առանցքը կարող է ձևավորվել սեփական կյանքը ինքնակամորեն որոշելու և հաստատելու անդուլ ջանքերի շնորհիվ: Եթե դա բացակայում է, ապա մարդը դառնում է ոնզեղյուր, «մտածող մեքենա», որբու:

Ըստ Հայրեգերի, առօրեականության կապանքներից ձերբազատվելու և իր անձին անդրադարձնալու միակ միջոցն ամեն մի մարդկային գոյության վերջնական սահմանին՝ մահվան աշքերին նայելն է: Առաջ քաշելով մահվան զարաֆարը՝ Հայրեգերը, ըստ եւթյան, ձևակերպում է անձնավորության իր ըմբռնումը որպես հասարակությունից կտրված և հասարակությանը հակադրված գոյավորի (մարդու): Այդ վիճակի վերլուծությունը, ըստ Հայրեգերի, բացահայտում է մարդկային գոյության խորքային գաղտնիքները, և օտարումն անհսկական գոյության փաստից վերածվում է նրա գիտակցման, այսինքն՝ դառնում է իսկական գոյության փաստ: Ոչ մի գոյավոր, բացի մարդուց չփոխի իր վերջավորության, մահկանացու լինելու մասին, ուստի և միայն մարդը գիտե իր «Ժամանակայնությունը», իսկ դրա հետ՝ նաև բուն կեցությունը: Մարդիկ իրենց կյանքի իմաստը չեն հասկանում և գևահատում, մինչև որ ողջ հստակությամբ չեն գիտակցում, որ նրա սահմանն ու նպատակը մահն է: Եվ որ մահը՝ ինքնին հարաբերական և բազմակերպ երևույթ է, որպես տեսակի մաս՝ առանձին անհատը չի մեռնում, քանի դեռ ապրում են նրա զավակները և թռոները, որպես մշակույթի մաս՝ մարդկային անհատն ապրում է, քանի դեռ ինչ-որ մեկն ընթերցում է այն, ինչն ինքը տպագրել է:⁸ Կոնկրետ մարդը մեռնում է իր գիտակցության և այլ մարդկանց հետ անմիջական շփումների մեջ: Մարդ արարածը միշտ ապրում է ինչ-որ մեկի համար, ինչ-որ մեկի հետ: Ակզբնապես մարդը մեռնում է նախնառաջ արտաքին աշխարհում: Այնուհետև՝ դրանց «միջև» աշխարհում: Մահը, ըստ Հայրեգերի, մարդու յուրօրինակ անհետացումն է իր բոլոր երեք

⁸ Այդ մասին ավելի հանգամանորեն մե՛ս, Գайденко П.П., Проблема времени в онтологии М.Хайдеггера, в кн. Философия марксизма и экзистенциализм, М., 1971, с.14-21:

⁹ Хайдеггер М., Бытие и время, М., 1993, с.126-127.

չափումներում՝ արտաքին և ներքին աշխարհում, ինչպես դրանց «միջև», միջակա աշխարհում¹⁰:

Մենք ցանկանում ենք կամ չենք ցանկանում, մահը միշտ ներկա է մեր կյանքում, այն մարդկային գործերի հզոր կարգավորիչն է: Սահը ներկայութեած է անհատական և հասարակական կյանքին բազմաթիվ կապերով: Եթե չին եր մահն այն ձևով, որով հայտնի է մարդկանց, չին լինի ոչ միայն մշակույթի մի շարք կարևոր տարրերը, այլև հասարակական կյանքի ձևերը:

Սեփական ներքնաշխարհում մարդկային անհատը կարող է նայել մահվան դեմքին՝ առանց տագնաայի և ցնցումների: Այստեղ նա միայնակ է և ոչ մեկից չի սարսափում, մահը սպառնալիք չէ: Ներքին կյանքում կարծես թե հստակ գծազրկած սահման չկա կյանքի և ոչ կյանքի, կյանքի և մահվան միջև: Մահանալը՝ ինքնին արտաքին աշխարհց աստիճանական հեռացման և դեպի ներքնաշխարհ անցման գործնթաց է, որտեղից, եթե մարդը չի վերադառնում վերստին արտաքին աշխարհ, կա միայն մի ելք՝ դեպի մահ: Հիվանդությունը կամ ծերությունը, որոնք մարդուն կտրում-անջատում են արտաքին աշխարհց, մարդուն ուղղում են դեպի «փր մոտ», այսինքն՝ վերջափակում են նրան հենց իր մեջ: Հետևաբար, մահանալը՝ ներքնաշխարհում կյանքի լարվածության առանձնահատուկ վիճակն է, եթե մարդը մնում է առանց նպատակների և առանց գործունեության, առանց արտաքին աշխարհի ձգուումների: Շրջապատող մարդկանց աշքում կարծես թե արդեն «վտարվում» է կյանքից: Հենց այդ ժամանակ մարդն իր մեջ հայտնաբերում է այն, ինչ չի կարողացել իսկապես ճիշտ գնահատել իր ապրած ողջ կյանքում: Քիչ բան կամ գրեթե ոչինչ զգիտենք մեր ներքնաշխարհում մահվան մասին: Մարդկանց և իրերի աշխարհում մահանալը նկարագրվում է գործողությունների, գործունեության, շփումների և կապերի շառավղի որակական նվազմամբ: Մարդը մահանում է՝ աստիճանաբար և երկար, իր նպատակների, ձգուումների, սիրո և ատելության զգացմունքների մահվան հետ միասին: Հայրեգերը հանդէս է գալիս մահանալու և մահվան իրողությունների նույնականացման դեմ: Մահացումն ունի իր բնախոսական (ֆիզիոլոգիական), հոգեկան և հասարակական չափումները: Մահանալու գործընթացը սկսվում է ավելի վաղ, եթե մարդը իրաժարվում է գործունեությունից, դառնում է հոգնության, ոգու ընկճվածության գերին: Ոգու ընկճվածությունը՝ դա մի քայլ է դեպի մահը:

¹⁰ Խайдеггер М., Бытие и время, М., 1993, с.126-127.

Մարդը մեռնում է միայն այն ժամանակ, եթե մտնելով սեփական ներքնաշխարհը, մնում է այնտեղ մինչև իր մահը:

Ս.Հայրեգերը նկատում է, որ սովորաբար մարդիկ խուսափում են սեփական մահվան վերաբերյալ մտքերից, ասում են, դեռ հայտնի չէ, թե դա երբ կինքի: Միգուցե, այդ ժամանակ կիայտնազործեն ինչ-որ դեղահարեր: Միգուցե ես բնավ չեմ մեռնի: Դրան Հայրեգերը պատասխանում է՝ կմեռնես հենց ինքդ, ոչ մեկը քո փոխարեն չի մեռնի: Եվ դու այժմ պետք է համակվես պապայում, ինչ-որ մի ժամանակ սեփական անխուսափելի մահվան մտքով: Սակայն Հայրեգերի մոտ, իհարկե, խոսքը ոչ այնքան պարզապես մահվան, որքան կյանքի, իսկական մարդկային կեցության մասին է: Ոչ մեկը որևէ մեկի փոխարեն չի մեռնելու, սակայն նաև ոչ մեկը նրա փոխարեն չի ապրելու սեփական կյանքը¹¹:

Մարդը, որ ապրում է իր իսկական, եկզիստենցիալ մտահոգություններով և տառապանքներով տոգորված կյանքով, մշտապես ապրում է մեղքի զգացումով: Նա գիտակցում է, որ իր կյանքը երբեք չի ստացվել այնպես, ինչպես որ կամեցել է, որ իրեն չի հաջողվել անել մեկը, մյուս սը, և երրորդը, իսկ ինչ է որ արել է, կարելի էր անհամեմատ ավելի լավ անել: Այդպիսի մարդը միշտ հենց իրեն է մեղափոր համարում, այլ ոչ թե արտաքին հանգամանքները: Միայն ինքն է ամեն ինչի համար պատասխանատու, չի կարող սեփական մեղքը բարդել հասարակության, պետության և ընտանիքի վրա, պնդելով, որ իրեն վատ են դաստիարակել: Նա ամեն ինչի համար պատասխանատու է, ինչ իր հետ տեղի է ունեցել կյանքում, քանի որ ինքն ազատ էակ է: Ոչ մեկը նրան չի ստիպել ապրել այսպես, այլ ոչ թե այնպես, ինչպես ինքն է ընտրել իր կյանքը, ինքը չի ապրել վերևից թելաղորդող երահանգներով: Այդօրինակ կյանքը, անկասկած, ծանր ու դժվարին է, սակայն միակ արժանապատիվ կյանքն է: Ինչո՞ւ համար մարդը երբեք ներքին լիիրավ գոհացում, խոր բավարարվածություն չի գտնում առօրեական կյանքում: Որովհետև, Հայրեգերի խոսքերով, «... ողջ գոյավորը, որ մեզ տրված է, օժտված չէ ո՛չ անհրաժեշտությամբ, ո՛չ է գոյության լիիրավությամբ: Այն, ինչին առնչվում ենք՝ ըստ եռթյան կեցության մի բեկորը, պատարիկն է: Մարդն էլ ինքը մի «թամնկարժեք ուրվագիծ» է... Չի կարելի չնկատել, զգալ մարդու կիսակատար լինելը»¹²:

¹¹ Философия Мартина Хайдеггера и современность, М., 1991, с. 57-59.

¹² Նոյն տեղում, էջ 170:

Նույնն էլ մարդու ներքին իրականությունն է, յուրաքանչյուր պահին նա տեսնում է միայն իր ներքին կեցության մի չնշին մասը, իսկ լիահուն ներկան կարծես թե մնում է նրանից քողարկված: Աշխարհը՝ ինքը ևս կեցության մի վիրխարի թեկոր է: Թվում է թե աշխարհը հոչակում, ճշում է իր ոչ կեցության մասին, այն մասին ինչն իրեն պակասում է: Ահա թե ինչն է ստիպում մարդուն փիլիսոփայել:

Հայդեգերյան մեկնաբանությամբ՝ փիլիսոփայել նշանակում է փնտրել կեցությունը, մեր հոգու հայրենիքը, որն այս էմայիրիկական /փորձով ստուգված/ աշխարհում չկա: Մենք զգում ենք միայն նրա բացակայությունը: Այն գոյություն ունի այն բանի շնորհիվ, որ չկա, այսինքն՝ գոյություն ունի իր բացակայության շնորհիվ: Մարդը տեսնում է միայն վերքը, որ մնացել է նրա բացակայությունից¹³:

Կեցության ըմբռնումը, նրանով համակվածությունը մարդուն դուրս է հանում էմայիրիկ կյանքի անհմաստ քառսից, կեցությունը վերադարձնելով հենց իրեն՝ մարդուն: Որքան էլ մարդու հոգելոր /մետաֆիզիկական/ հայրենիքը հեռու լինի առարկայական աշխարհի արտաքին իրականությունից, որքան էլ անհնարին թվան այդ հայրենիքի որոնումները, մարդը միշտ էլ այն փնտրելու է և հենց այդ փնտրությունը էլ մնալու է որպես մարդ, որն ինքն է ընտրել իր կյանքը: Ինքը պատասխանատու է իր բոլոր արարքների համար և հետևաբար ազատ էակ է: Միայն այսպես է հնարավոր գտնել կեցության նոր չափում, կամ, որ նոյնն է, հոգու կեցություն, որն աշխարհի հետ մարդու գործակցության բոլոր տեսակներին՝ գեղագիտական, մտավոր, գործնական և այլն, հաղորդում է էկզիստենցիալ իմաստ և առանձնահաստոկ գրավչություն, հմայք: Խոսքը, ըստ Էության, վերաբերում է մարդու կեցության, կյանքի բերկրանքի և մարդկայնության զգացողությունը վերադարձնելու մասին: Այս ճշմարտության ուրույն իմաստը բնութագրել է մեր ժամանակների նշանավոր փիլիսոփա Մերաբ Մամարդաշվիլին: «Կեցությունը, - ասել է նա, - նոյնն է՝ ինչ-որ անօրինական ուրախությունը: Չկա ոչ մի պատճառ, որպեսզի մենք լինենք և այդքանով ուրախալի է լինելը»¹⁴:

ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածը վերլուծում է Մ.Հայդեգերի փիլիսոփայական տեսակետները օնտոլոգիական օտարման և մահվան ինդիքների

¹³ Философия Мартина Хайдеггера и современность, М., 1991, с. 57-59.

¹⁴ Мамардашвили М.К., Как я понимаю философию, М., 1992, с. 400.

վերաբերյալ: Հոդվածում հատուկ ուշադրություն է դարձվում «մահ» հասկացության բազմակողմանի բովանդակության բացահայտմանը:

Բանալի բառեր. լինելիություն, օտարում, անսահմանության գիտակցություն, մահ:

DAS MAN И ХАЙДЕГГЕРОВСКАЯ ФИЛОСОФИЯ СМЕРТИ

Манук Арутюнян

*Доктор философских наук,
ведущий научный сотрудник Института
философии, социологии и права НАН РА*

РЕЗЮМЕ

В статье проанализированы философские взгляды М.Хайдеггера о проблемах бытия, онтологического отчуждения и смерти. В статье уделяется особое внимание раскрытию многогранного содержания понятия «смерть».

Ключевые слова: бытие, отчуждение, сознание «бездонности», смерть.

HEIDEGGER'S PHILOSOPHY OF DAS MAN AND DEATH

Manuk Harutyunyan

*Doctor of Philosophy,
Leading Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA*

SUMMARY

The article analyzes the philosophical views of M. Heidegger about the problems of being, the ontological alienation and death. The article pays special attention to the disclosure of the multifaceted content of the concept "death".

Key words: existence, alienation, consciousness of "bottomlessness", death.